ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 07» հոկտեմբերի 2019 թվական N 111-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆԱՐԻՆԵ ԱԶԱՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման 4-րդ կետի պահանջները, ինչպես նաև Նարինե Ազատյանի կողմից ներկայացված հայտը՝

որոշում եմ.

1. Անհատ ձեռնարկատեր Նարինե Ազատյանին գյուղ Մայակովսկի 1-ին փողոց թիվ 23 հասցեում, համաձայն իր հայտում նշված ժամանակահատվածի՝ 2019 թվականի չորրորդ եռամսյակի համար տրամադրել առևտրի օբյեկտում ոգելից խմիչքի վաճառքի թույլտվություն :

2.Հանձնարարել Արուս Ազատյանին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ. հոկտեմբերի 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 86 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» հոկտեմբերի 2019թվական N 112 Ա

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքաների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին»N 731-Ն ,2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 912-Ն, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ որոշումների պահանջների, « Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, հիմք ընդունելով «Վալերիկ Գալստյան» ԱՁ-ի կողմից 2019 թվականի հուլիսի 3-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը՝ ***որոշում եմ.***

1. Մայակովսկի համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության 0.07617 հա հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-043-0103-0001) քաղաքացի Լևոն Ազատյանի կողմից կառուցած 149.28 քմ շինությունները ճանաչել համայնքային սեփականություն:

2. Մայակովսկի համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության 0.07617 հա հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-043-0103-0001) քաղաքացի Լևոն Ազատյանի կողմից կառուցած 149.28 քմ շինությունները ճանաչել օրինական:

3. Մայակովսկի համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության 0.07617 հա հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 07-043-0103-0001) և 149.28 քմ շինություններին տրամադրել 1-ին փողոց թիվ 2/5 հասցե:

4. Ինքնակամ կառույցի պահպանումը չի հակասում քաղաքաշինական նորմերին , այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

6.Ուժը կորցրած ճանաչել Մայակովսկի համայնքի ղեկավարի 2019 թվականի սեպտեմբերի 30-ի «Շինությունները համայնքային սեփականություն, օրինական ճանաչելու, և հասցեավորում տալու մասին» թիվ 105-Ա որոշումը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ԲԱՐՍԵՂՅԱՆ
Գ.Մայակովսկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 86 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հոկտեմբերի 2019թվական N 113-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաաքացի Գեղամ Սահակի Ասատրյանի (ծնված՝ 1957թ.) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Մայակովսկի համայնքի 1-ին փողոց, 1-ին փակուղի, թիվ 5 հասցեի հողակտորում 2018 թվականներին ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 07052012-07-0140 վկայական, «ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ» ԱՁ-ի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 11-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ» ԱՁ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Գեղամ Սահակի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 1-ին փողոց, 1-ին փակուղի, թիվ 5 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցել է շինություններ. բնակելի տուն՝ Տարտ=168.68 քառ.մետր, նկուղ՝ Տարտ=43.14 քառ.մետր,ավտոտնակ՝ Տարտ=66.92 քառ.մետր և օժանդակ շինություններ՝ աստիճան՝ Տարտ=4.29 քառ.մետր,պարիսպ՝ Տարտ=30.59 քառ.մետր :

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1, 10, 11, 13 և 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Գեղամ Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 1-ին փողոց, 1-ին փակուղի, թիվ 5 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

որոշում եմ.

1. Գեղամ Սահակի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 1-ին փողոց, 1-ին փակուղի, թիվ 5 հասցեի հողակտորում կառուցված շինությունները. բնակելի տուն՝ Տարտ=168.68 քառ.մետր, նկուղ՝ Տարտ=43.14 քառ.մետր, ավտոտնակ՝ Տարտ=66.92 քառ.մետր, աստիճան՝ Տարտ=4.29 քառ.մետր, պարիսպ՝ Տարտ=30.59 քառ.մետր մակերեսներով շինությունները համարել օրինական :

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Մայակովսկի համայնքի բյուջեի N 900105222229 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 629 302 (վեց հարյուր քսաներեք հազար երեք հարյուր երկու) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը :

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.հոկտեմբերի 16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» հոկտեմբերի 2019 թվական N 114-Ա

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ

Մայակովսկի համայնքապետարան է դիմել համայնքի բնակիչ, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 4-րդ կուրսի ուսանող Մերի Մարտիրոսյանը, խնդրելով կատարել ուսման վարձի որոշակի դրամական փոխանցում :

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35 –րդ հոդվածի 1-ին մասի 24- րդ կետի և համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 18-ի թիվ 08–Ա որոշման պահանջները .

որոշում եմ՝

1. Կատարել փոխանցում .Մերի Մարտիրոսյանի անունով 40 000 / քառասուն հազար / դրամ ուսման վարձ<<Արարատ բանկ>> , 1570027790960100 հաշվի համարին :
2. Հանձնարարել հաշվապահ Աստղիկ Հովսեփյանին կատարել փոխանցում :
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.փետրվարի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 86 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հոկտեմբերի 2019թվական N 115-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման ,հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի ավագանու 2019թ. հոկտեմբերի 9-ի N 54-Ա որոշումը և քաղաքացի Լուսինե Խաչատրյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունը և սպասարկման ու պահպանման հողամասը ուղղակի վաճառքով գնելու համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Մայակովսկի համայնքի սեփականություն հանդիսացող 1-ին փողոց թիվ 4/1 հասցեում գտնվող 70.8 քառ.մետր մակերեսով շինությունը և դրա սպասարկման ու պահպանման համար զբաղեցրած 0.003079 հա հողատարածքը /ծածկագիր՝ 07-043-0013-0034/ ուղղակի վաճառքով օտարել Մայակովսկի համայնքի 1-ին փողոց, թիվ 4 հասցեի տան բնակիչ Լուսինե Խաչատրյանին :

2.Սահմանել, որ Լուսինե Խաչատրյանը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 30-օրյա ժամկետում Մայակովսկի համայնքի բյուջեի N 900105222229 հաշվարկային հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված՝ 1 338 120 / մեկ միլիոն երեք հարյուր երեսունութ հազար հարյուր քսան / և 900105222187 հաշվարկային հաշվին՝ 23 752 / քսաներեք հազար յոթ հարյուր հիսուներկու / Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը :

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 30-օրյա ժամկետում չվճարման դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում կրկին ներկայացնել գրավոր առաջարկություն անշարժ գույքը վարձակալելու վերաբերյալ: Վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն տնօրինել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշման 37-րդ կետով սահմանած կարգով:

4.Շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, այն կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանը :

7. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.հոկտեմբերի 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հոկտեմբերի 2019 թվական N 116-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի,

որոշում եմ.

1.Քաղաքացի Մինաս Հովհաննիսյանին տալ բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Մայակովսկի համայնքի 15-րդ փողոցի թիվ 37 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Մինաս Հովհաննիսյանին ՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2019թ.հոկտեմբերի 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<.24>> հոկտեմբերի 2019թվական N 117-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-Ի N 31-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի, «Համայնքային ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2019 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 217-Ա որոշումը ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2019 թվականի ապրիլի 3-ի « Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով կազմավորելու և համայնքի ղեկավարի 2017 թվականի հուլիսի 17-ի N 58-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 31-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1)որոշման 1-ին կետում «Մկրտչյան Ռոստամ» բառերը փոխարինել «Գեղամյան Տիգրան» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.հոկտեմբերի 24